## Մամուլի հաղորդագրություն

*Երևան, Սեպտեմբեր 18, 2015*

**ԵՄ-ը հայտարարում է Հայաստան-Վրաստան Ծրագրային Առաջարկների մրցույթի հաղթողներին**

***Հայաստան-Վրաստան Տարածքային Համագործակցության Ծրագրի շրջանակում հայտարարված Ծրագրային Առաջարկների մրցույթի հաղթողները արդեն հայտնի են:***

***2015թ.-ի սեպտեմբերի 25-ին Դիլիջանում տեղի կունենա հաղթած նախագծերի հայտարարման պաշտոնական արարողությունը:***

Տարածաշրջանային և տեղական իշխանության, համայնքների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները Հայաստանի Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերից, ինչպես նաև Վրաստանի Քվեմո-Քարթլի և Սամցխե-Ջավախեթի շրջաններից հիմնել են համագործակցության ծրագիր՝ հարևան շրջաններում ընդհանուր սոցիալ-տնտեսական մարտահրավերները հաղթահարելու ուղղված համատեղ լուծումներ մշակելու նպատակով: Հայաստան-Վրաստան Տարածքանային Համագործակցության Ծրագրի շրջանակում համատեղ նախագծեր իրականացնելու նպատակով դրամաշնորհի ստանալու ընդհանուր թվով 40 առաջարկ է ներկայացվել ԵՄ Ծրագրային Առաջարկների մրցույթին: ԵՄ-ի կողմից 1.35 մլն եվրո է հատկացված Հայաստան-Վրաստան Տարածաշրջանային Համագործակցության Ծրագրին:

Արարողությանը ներկա են գտնվելու Հայաստանի և Վրաստանի պետական մարմինների ներկայացուցիչներ և ԵՄ պատվիրակություններ, հաղթող ծրագրերի շահառուները/գլխավոր գործընկերները, ինչպես նաև երկու երկրների ԶԼՄ ներկայացուցիներ: Տեղի կունենան մամուլի ասուլիս և հարցազրույցներ Հայաստանի և Վրաստանի լրագրողների համար:

Մինչ ասուլիսը՝ 2015թ. սեպտեմբերի 23-24-ը, Դիլիջանում տեղի կունենա նաև ներածական վերապատրաստման դասընթաց Ծրագրային Առաջարկների մրցույթի հաղթողների համար: Վերջիններս կստանան պրակտիկ խորհուրդներ դրամաշնորհային պայմանագրերի, ծրագրերի իրականացման, ֆինանսական և մատակարարման կանոնների, տեսանելիության և հաղորդակցման խնդիրների վերաբերյալ, հաշվետվությունների և վերահսկման չափանիշների, ինչպես նաև երկու երկրների առանձնահատուկ ազգային պահանջների մասին: Դասընթացի ընթացքում հաղթող դիմորդներին կտրամադրվեն նաև անհատական խորհրդատվություններ՝ դրամաշնորհի կառավարման խնդիրների վերաբերյալ:

Հայաստան-Վրաստան Տարածքային Համագործակցության Ծրագիրը Արևելյան Գործընկերության երկրներում ծրագրային առաջարկների համար մրցույթի չորս ծրագրերից առաջինն է, որի հաղթողները արդեն հայտնի են:

Հրավիրում ենք լրագրողներին մասնակցել մամուլի ասուլիսին, որը տեղի կունենա սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00, Բեսթ Վեսթերն Փարադայզ Հոթել Դիլիջանում, հասցե՝ Կամոյի փողոց 156, Դիլիջան: Տարածաշրջանային և տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ մեդիա իրադարձությանը ներկա գտնվելու ճանապարհորդության հետ կապված բոլոր ծախսերը կփոխհատուցվեն: Հավատարմագրման վերջնաժամկետն է՝ սեպտեմբերի 23, ժամը՝ 15:00, էլ. փոստ՝ ***emma.sargsyan@eaptc.eu***.

***Ծրագրի մասին***: *Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության աջակից ծրագիրը (ԱԳՏՀ աջակից ծրագիր) սկսվել է Մոլդովա-Ուկրաինա, Հայաստան-Վրաստան, Ադրբեջան-Վրաստան և Բելառուս-Ուկրաինա երկրների սահմաններում տարածքային համագործակցության ծրագրի համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սահմանամերձ գոտու առանձնահատկությունները, ինչպես նաև ուժեղացնելու տեղական և տարածաշրջանային պետական և ոչ պետական մարմինների հնարավորությունները միջսահմանային ծրագրերը միասին զարգացնելու և իրականացնելու համար: ԵՄ ընդհանուր ներդրումը ԱԳՏՀ-ում 12.5 միլիոն եվրո է: Արևելյան գործընկերությունը (ԱԳ) Եվրոպական Միության նախաձեռնությունն է, որը ղեկավարվում է Արևելյան Եվրոպայի եւ Հարավային Կովկասի վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա: Նախաձեռնությունը նպատակ ունի ավելի սերտ հարաբերություններ ստեղծել ԵՄ և Արևլյան գործընկերության միջև՝ խորացնելով իրենց քաղաքական համագործակցությունը և տնտեսական ինտեգրումը:*

*Հայաստան-Վրաստան ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք ԱԳՏՀ հաղորդակցության փորձագետ Տատյանա Դերեվյանկինայի հետ՝* tatiana.derevyankina@eaptc.eu, և/կամ այցելեք

http://www.eaptc.eu, https://www.facebook.com/eaptc.eu,

https://twitter.com/EaP_TC http://www.linkedin.com/groups/EaPTC-5109143

The Programme is implemented by the Altair Asesores led Consortium.
7-9, Taktakishvili St., office 1
Tbilisi 0162, Georgia
tel: +995322 369074
e-mail:office@eaptc.eu
portal: eaptc.eu

The Programme is funded by the European Union

The European Union is made up of 28 countries and the people of those countries. It is a unique political and economic partnership founded on the values of respect for human dignity, freedom, equality, the rule of law and human rights. Over more than fifty years we have created a zone of peace, democracy, stability and prosperity on our continent while maintaining cultural diversity, tolerance and individual freedoms. The EU looks to share its values and achievements with neighboring countries and peoples and those farther afield.